4020

Հարությունից մայր արթուր

Ս. Էջմիածնի

281.6
Ա-23

1917

2001

2010

81.6
-23

ՈՉ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ

81.6
С-23

Էլեքտրաշարժ Տպարան Մայր Սթոռոյ
1917

ՆԱԽԱԳԻԾ

Մ. ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա.

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ.

§ 1. Մայր Աթոռ Ս. Էջմիածինը է համայն հայութեան կենարոնը և բոլոր հայ վանքերի Մայրավանքը

§ 2. Ս. Էջմիածինն է Ամենայն Հայոց Հայրապետի Աթոռը։

§ 3. Ս. Էջմիածնի վանքն ունի իւր միաբանութիւնը, որի վանահայրն է Ամենայն Հայոց Կաթուղիկոսը։

§ 4. Ս. Էջմիածնի միաբանութիւնը ցկեանս կուսակրօն մնացողների հոգեւոր ուխտ է։

§ 5. Ս. Էջմիածնի միաբանութիւնը ունի իւր առանձին կանոնադրութիւնը, որը մշակում է միաբանական ընդհանուր ժողովը և հաստատում վանահայր Ամենայն Հայոց Կաթուղիկոսը։

§ 6. Համաձայն եկեղեցական կանոնների և պատմականօրէն սրբազործուած տուեալների Ս. Էջմիածնի միաբանութեան նպատակն է՝.

ա.—Աւետարանը քարոզել.

բ.—Հոգևոր դպրոցներ բանալ.

գ.—Հայապիտութիւնն ու հայ գեղարուեստը մշակել.

գ.—Աստուածահաճոյ հիմնարկութիւններ պահել.

ե.—Եկեղեցու համար պատրաստի վարիչներ մատակարարել հայ ժողովրդի կրօնա-բարոյական կեանքը բարձրացնելու։

§ 7. Ս. Էջմիածինն իւր նպատակների ծառայելու համար ունի եկամուտի որոշ աղբիւրներ։

§ 8. Միաբանական կեանքի հիմքը հայ եկեղեցու սրբագործուած ընտրական և ժողովական (կոլեգիալ) ոգին է։

§ 9. Միաբանութիւնը վարում է համայնական կեանք։

Ծանօթ. Միաբանական կենցաղի համար մշակուած է առանձին Հրահանգ։

Բ.

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ.

§ 10. Մայր Աթոռի միաբանութիւնը, որի գլուխն է Ամենայն Հայոց Հայրապետը, կազմուած է՝

ա.—Արքեպիսկոպոսներից և եպիսկոպոսներից.

բ.—Ծայրագոյն և մանաւոր վարդապետներից.

գ.—Աբեղաներից

դ.—Սարկաւագներից և դպիրներից։

§ 11. Միաբանութեան անդամ ընտրուողը պէտք է լինի.

ա.—21 տարեկան.

բ.—Առնուազն միջնակարգ կրթութեան տէր.

53180-ահ

ՀԱՅ-ԱԹՈՌ ՍՐ

գ.—Ֆիզիքապէս առողջ և ազատ մարմնական ու հոգեկան արատներից։

§ 12 Միաբան լինել ցանկացողը խընդիր է տալիս Վեհափառ Հայրապետի անունով ներկայացնելով պատշաճ վկայագրերը։

§ 13, Միաբան լինել ցանկացողը նախապէս վանքում պէտք է ապրէ առնուազն վեցամիս։

§ 14. Նոր միաբանին ընտրում է ընդհանուր միաբանական ժողովը և հաստատում է Վեհափառ Հայրապետը։

§ 15. Միաբանական ուխտին անհաւատարիմ անդամը, ձեռք առնուած միջոցներով չուղղուելու դէպքում, արձակւում է։

§ 16. Միաբաններից որ և է մէկը միաբանութիւնից հրաժարուելու դէպքում պատճառաբանեալ հրաժարական է ներկայացնում Վեհափառ Հայրապետին, որն և ուղարկում է միաբանական ընդհանուր ժողովին։

Գ.

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՐՏՔՆ ՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ.

§ 17. Միաբանութեան իւրաքանչիւր անդամ պարտաւոր է անխափան յաճախել եկեղեցի և եկեղեցական պաշտօնները կատարել։

§ 18. Միաբանութեան իւրաքանչիւր անդամ վանքում պէտք է հաւասարապէս ստանայ՝ բնակարան, մնունդ (ընդհանուր սեղանատանը), վառելիք, լուսաւորութիւն, բժշկական խնամք և ուսումնական—կրթական զարգացման անհրաժեշտ բոլոր միջոցները։

§ 19. Իւրաքանչիւր միաբան ստանում է, համաձայն իւր աստիճանի և վարած պաշտօնների, ստհմանուած ռոճիկը։

§ 20. Պաշտօնատար միաբանները ստանում են հնգամեայ յաւելումներ մինչև հինգ հնգամեակը։

§ 21. Իւրաքանչիւր միաբան կարող է կալուածք ունենալ եկամուտից ցմահ օգտուելու իրաւունքով։ Կալուածքը պէտք է ձեռք բերէ Ս. Էջմիածնի անունով։

§ 22. Ս. Էջմիածնի վանքն է օրինական ժառանգը իւրաքանչիւր միաբանի շարժական և անշարժ ունեցուածքի։

§ 23. Միաբանութեան իւրաքանչիւր անդամ ուխտում է հայաստանեայց առաքելական ս. եկեղեցուն հաւատարմութիւն և Ամենայն Հայոց Կաթուղիկոսին հնազանդութիւն։

§ 24. Իւրաքանչիւր միաբան պարտաւոր է կատարել իրեն յանձնուած աշխատանքը կամ պաշտօնը։ Միաբանը կարող է առ առաւելն ունենալ երկու պաշտօն։

Ծաւթ. Առաջարկուած պաշտօնից կամ աշխատանքից հրաժարուողը դրաւոր պատճառաբանութիւն է ներկայացնում Վեհափառ Հայրապետին, որը քննում է միաբանական ընդհանուր ժողովում։

§ 25. Միաբանների եկեղեցական աստիճանի բարձրացման համար միաբանական ժողովն ևս իրաւունք ունի յատուկ միջնորդութիւն յանձուցանելու Վեհափառ Հայրապետի առաջ։

§ 26. Մասնաւոր և ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստանալու համար հարկաւոր է գիտական աշխատանք ներկայացնել (աստուածաբանական, հայագիտական, հայ եկեղեցու, պատմութեան, գրականութեան վերաբերեալ) և ստանալ Ուսումնական Խորհրդի հաւանութիւնը։

Դ.

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

§ 27. Միաբանական ընդհանուր ժողովը կազմուում է վանքում եղող բոլոր միաբաններից։

§ 28. Տարեկան առնուազն միանգամ տեղի է ունենում դրսի և ներսի բոլոր միաբանների ընդհանուր ժողովը, որի զբաղման առարկաներն են.

ա.—Ազգային—եկեղեցական ժամանակակից հարցերի քննութիւնը.

բ.—Դրսի և ներսի միաբանների գործունէութեան փոխադարձ ծանօթութիւն.

գ.—Վանական հաստատութիւնների և մարմինների տարեկան գործունէութեան և հաշիւների քննութիւն.

դ.—Հաստատութիւն հաշիւների և նախահաշիւների.

ե.—Ընտրութիւն վանական հաստատութիւնների և մարմինների պաշտօնեաների։

§ 29. Միաբանական ընդհանուր ժողովի նախագահն է Վեհափառ Հայրապետը։

Ընդհանուր ժողովն ունի իւր դիւանը, որը կազմուած է երկու ատենապետներից և երկու ատենադպիրներից, որոնք ընտրուում են մէկ տարի ժամանակով։

§ 30. Բացի արտակարգ դէպքերից միաբանական ընդհանուր ժողովները գումարուում են առնուազն ամիսը մի անգամ։

§ 31.–Միաբանական ընդհանուր ժողովն օրինական է երբ ներկայ են միաբանների կիսից աւելին։

§ 32. Միաբանական ներսի անդամների ընդհանուր ժողովի քննութեան ենթակայ են.

ա.–Միաբանական, եկեղեցական ազգային հարցեր.

բ.–Վանական հիմնարկութիւնների և մարմինների կիսամեայ հաշիւներ։

§. 33. Ժողովի որոշումները վաւերական են, երբ ստանում են ձայների քացարձակ մեծամասնութիւնը և հաստատուում Վեհափառ Հայրապետից։

Ե.

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

§ 34 Մայր տաճարի ներքին բարեկարգութեան անմիջական հսկողն է լուսարարապետը, որն ունի իւր աւագ օգնական վարդապետը և կրտսեր օգնական երկու սարկաւագներ։

§ 35 Լուսարարապետի անմիջական պարտականութիւններն են.

ա.—հսկել եկեղեցում աստուածային պաշտաման և եկեղեցական կարգերի անթերի կատարելու վրայ.

բ.—անկորուստ պահել եկեղեցական անօթները, զարդերը, զրքերը, զգեստները և կահ կարասիները։

§ 36 Լուսարարապետի կարգադրութիւններն եկեղեցու ներսում պարտադիր են.

ա.— աստուածպաշտութեան ժամանակ բոլոր միաբանների համար.

բ.—տաճարի բոլոր պաշտօնեաների համար։

§ 37 Մայր Տաճարն ունի իւր յատուկ ժամօրհնողը։

§ 38 Մայր Տաճարն ունի իւր առանձին երգեցիկ խումբը և խմբապետը։

§ 39 Մայր Տաճարն ունի երկու կարգապահներ աստուածպաշտութեան ժամանակ ժողովրդի մէջ կարգ պահելու։

Զ.

ՎԵՀԱՐԱՆ

§ 40 Վեհարանի պաշտօնէութիւնը կազմուած է Դրան եպիսկոպոսներից, վարդապետներից և սարկաւագներից։

§ 41 Վեհարանի շէնքերի, զանազան մասերի անտեսութիւնը, բարեզարդութիւնը, ներքին և արտաքին կարգապահութիւնը ենթարկուում են դրան աւագ եպիսկոպոսին։

§ 42 Վեհափառ Հայրապետի հանդիսաւոր, պաշտօնական ընդունելութիւնների հսկողութիւնը յանձնուած է Դրան–արարողապետ եպիսկոպոսին։

§ 43 Վեհարանի արտաքին պաշտօնէութիւնը և ծառայողները ենթարկուում են Դրան եպիսկոպոսին։

Է.

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ընդհանուր կանոններ)

§ 44 Ս. Էջմիածնի ներքին կեանքը կառավարելու համար կան վանական վարչական մարմիններ և հաստատութիւններ։

§ 45 Վանական հաստատութիւնները կառավարուում են կառավարիչներով և օգնականներով, իսկ վարչական մարմինները՝ խորհուրդներով։

§ 46 Բոլոր վարչութիւնների անդամները, կառավարիչները և օգնականները ընտրուում են ընդհանուր միաբանական ժողովում 3 տարի ժամանակով և առաջարկուում ի հաստատութիւն Վեհափառ Հայրապետի։

§ 47 Ընտրուած պաշտօնեաների հեռանալու դէպքում միաբանական ժողովը ընտրում է նորին։

§ 48 Վանական բոլոր վարչութիւններն ու մարմիններն իրենց ներքին գործառնութեան համար ունին յատուկ հրահանգներ, որոնք միաբանական ժողովում ընդունելուց և Վեհափառ Հայրապետից հաստատուելուց յետոյ գործադրուում են։

§ 49 Բոլոր վարչութիւններն ու կառավարիչները պաշտօնի անցնելու ժամանակ ընդունած ձևով ստացողական յանձնողական արձանագրութիւն են կազմում։

§ 50 Վանական վարչական բոլոր մարմիններն ու հաստատութիւններն ունին իրենց դիւանները, կնիքները, վաւերացած ժապաւենեալ մատեանները և գոյքի ու կայքի մանրամասն ցուցակները։

§ 51 Վանական բոլոր հիմնարկութիւններն ու մարմիններն իրենց ներքին գործառնութեան մէջ անկախ են։

§ 52 Այն պաշտօնները, որոնց համար հնարաւոր չէ միաբաններից յատուկ անձն ընտրել, կարելի է վստահելի և կարող աշխարհականի յանձնել ընտրութեամբ։

Ը.

ՎԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

§ 53 Մատենադարանի նպատակն է ի մի հաւաքել ամենուր ցրուած հայերէն ձեռագրները և հայագիտութեան վերաբերեալ տպագիր հայ և օտարազգի լեզուներով բոլոր հրատարակութիւնները և հայ մամուլը։

§ 54 Մատենադարանի կառավարութիւնը յանձնուած է մատենադարանապետին և սրա օգնականին։

§ 55 Մատենադարանին կից գտնուում է միաբանութեան ընթերցարանը։

§ 56 Մատենադարանից կարելի է օգտուել համաձայն հրահանգի։

ԻԻ. ԹԱՆԳԱՐԱՆ

§ 57 Թանգարանի նպատակն է ի մի ժողովել Մ. Աթոռ ազգային եկեղեցամշակոյթի ամենատեսակ հայ և օտարազգի արտադրութիւններն ու յուշարձանները այլ և հայ մշակոյթին վերաբերող օտարազգի արտադրութիւնները։

§ 58 Թանգարանն ունի հետևեալ մասերը.

ա.—Եկեղեցական Թանգարան.

բ.—Ազգային հնութիւնների Թանգարան, ազգագրական բաժնով.

գ.—Պատկերասրահ.

դ.—Զարթնոցի Թանգարան։

§ 59 Եկեղեցական Թանգարանը գտնուում է Վեհափառ Հայրապետի անմիջական հսկողութեան տակ։

§ 60 Թանգարանն ունի իւր յատուկ թերթը։

§ 61 Թանգարանից կարելի է օգտուել համաձայն յատուկ հրահանգի։

III. ՏՊԱՐԱՆ

§ 62 Տպարանի նպատակն է ծառայել ազգային լուսաւորութեան գործին, հրատարակելով կրօնա-բարոյական, հայագիտական, գրական-գեղարուեստական աշխատանքներ։

Սոյն նպատակին ծառայելու համար տպարանը պէտք է արդիւնաբերական կան հիմքերով կառավարուի։

§ 63 Տպարանն ունի իւր կառավարիչը և մասնագէտ օգնականը։

§ 64 Տպարանի կառավարիչը հսկում է տպարանի բոլոր մասերի՝ տպարանի, ձուլարանի, կազմատան, գրատան և թղթատան վրայ։

§ 65 Տպարանում հրատարակւում են Մ. Աթոռի պաշտօնական և գիտական թերթերը։

IV. ՀԻՒՐԱՏՈՒՆ

§ 66 Հիւրատունն ունի հետևեալ բաժինները.

ա.—Դրսից եկած միաբանների.

բ.—Ուխտաւորների.

գ.—Պաշտօնական այցելուների։

§ 67 Հիւրատան կառավարիչն է հիւրընկալը։

§ 68 Հիւրատան ծախքերը հոգում է վանական կառավարութիւնը։

V. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ-ԾԵՐԱՆՈՑ

§ 69 Մ. Աթոռի ծեր և հիւանդ միաբանների համար կայ հիւանդանոց-ծերանոց։

§ 70 Հիւանդանոցն ունի իւր յատուկ բժիշկը, դեղատունը, դեղագործը և հիւանդապահ քոյրերը։

§ Ծերանոցում խնամւում են միաբանութեան ծերացած և խնամքի կարօտ անդամները։

§ Ծերանոցն ունի իւր յատուկ կառավարիչը և ծառայողները։

VI. ՍԵՂԱՆԱՏՈՒՆ

§ 73 Միաբանութիւնն ունի իւր եղբայրական սեղանատունը։

§ 74 Սեղանատունն ունի իւր յատուկ կառավարիչը։

§ 75 Սեղանատան կառավարչի հսկողութեան տակ են գտնւում՝ խոհանոցը և մթերանոցը։

VII. ՀԱՆԴԵՐՁԱՏՈՒՆ

§ 76 Միաբանութեան սենեակների կահ կարասիքի, արդ ու զարդի համար կայ հանդերձատուն։

§ 77 Հանդերձատունն ունի իւր կառավարիչը, որը հոգում է միաբանների սենեակների ներքին կահաւորութեան պակասները։

Թ.

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

I. ՎԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

§ 78 Վանական Խորհուրդը կազմւած է վանական մարմինների կառավարիչներից և վարչութիւնների նախագահներից։

§ 79 Խորհուրդն ընտրում է իւր միջից ատենապետ և քարտուղար։

§ 80 Խորհուրդը քննում և ներկայացնում է միաբանական ընդհ. ժողովին.

ա.—Վանական վարչական մարմինների և հաստատութիւնների առաջարկները և զեկուցումները.

բ. Տեղեկագրերը, հաշիւները և նախահաշիւները.

գ.—ամսական ստուգութիւնները.

դ.—հսկում է վանքի բարեգործութեան և միաբանութեան բարեկեցութեան վրայ.

ե.—գործադրում է միաբանական ընդհանուր ժողովների կայացրած ու Վեհափառ Հայրապետից հաստատուած որոշումները։

զ.—մշակում է հրահանգներ վանական վարչական հաստատութիւնների և մարմինների համար և ներկայացնում միաբանական ընդհանուր ժողովին.

է.—լուծում է ընթացիկ հարցեր։

§ 81 Վանական խորհրդի անդամներից իւրաքանչիւրը իւր տեսչութեան վերաբերեալ խնդիրների համար անհատապէս, իսկ վանական խորհրդի գործունէութեան համար հաւաքաբար պատասխանատու են միաբանական ժողովի առաջ։

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

§ 82 Ուսումնական խորհուրդը կազմուած է երեք անդամից։

§ 83 Խորհրդի գործունէութեան շրջանն է.

ա.—քննել մանաւոր և ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստանալու համար այն բոլոր գիտական շարադրութիւնները, որոնք ստացուում են Վեհափառ Հայրապետի անունով և ուղարկուում իրեն քննելու։ Քննութեան արդիւնքը ուղարկուում է ի հաստատութիւն Վեհափառ Հայրապետին։

բ.—նոյն կարգով քննում է այն շարադրութիւնները, որ ներկայացնում են միաբանները հրատարակելու Մ. Աթոռի հաշուով

գ.—այն կրօնական-բարոյական, եկեղեցական գրուածքները, որոնք յանձնարարուում են Վեհ. Հայրապետից։

դ.—վարում է «Արարատ»-ի խմբագրութիւնը։

§ 84 Խորհուրդը մրցանակներ է նշանակում կրօնական եկեղեցական-հայագիտական զանազան աշխատանքների համար։

§ 85 Խորհուրդը կարող է հարկաւոր դէպքում գրուածքների քննութեան համար դիմել աշխարհական ձեռնահաս և կարող անձանց։

III ՀԱՅՐԵՆԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ, ԵՒ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՂ ԽՈՐՀՈՒՐԴ

§ 86. Խորհրդի նպատակն է հսկել և իմի հաւաքել հայ կեանքի անցեալ մշակոյթի յուշարձաններն ու մնացորդները։

§ 87. Խորհուրդի անդամներն են՝ Մատենադարանապետը, Թանգարանապետը, Ուսումնական խորհուրդի նախագահը և միաբանութիւնից ընտրուած 2 անդամ։

§ 88. Խորհուրդը միջոցներ է ձեռք առնում աւերակները վերականգնելու, մօդելներ, պատկերների այլբոմներ, մանրամասն տեղեկագրութիւններ յուշարձաններ հաւաքելու և հրատարակելու։

§ 89. Խորհուրդն ունի իւր մասնաճիւղերը կարևոր կենտրոնավայրերում։

§ 90. Խորհրդի ձեռք բերած ժողովածուները տեղաւորում են վանական համապատասխան հիմնարկութիւններում։

IV ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

§ 91. Մ. Աթոռն ունի իւր յատուկ քարոզչական մարմինը, որի նպատակն է յատուկ քարոզիչներ պատրաստել։

§ 92. Քարոզչական մարմինը բաղկացած է կարող, գիտական աստիճան ունեցող երեք միաբաններից։

§ 93. Քարոզչական մարմինն ունի իւր յատուկ դպրոցը քարոզիչներ պատրաստելու։

§ 94. Քարոզչական մարմինը կազմակերպում է դասախօսութիւններ, կարճատև դասընթացքներ իւր նպատակի համար։

§ 95. Քարոզչական մարմինը կարևոր կենտրոններում ունի իւր ճիւղերը։

§ 96. Քարոզչական մարմինն ունի իւր յատուկ թերթը։

§ 97. Քարոզչական մարմինը ունի իւր նպատակների համար յատուկ դրամագլուխ։

V ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

§ 98. Տնտեսական խորհուրդի գործունէութեան շրջանն է՝ հսկել Մ. Աթոռի դրսի և ներսի բոլոր կալուածների և եկամուտների վրայ։

§ 99. Տնտեսական խորհուրդը կազմուած է վանական խորհրդի և կառավարութեան նախագահներից, ճեմարանի տեսչից կամ օգնականից և միաբանութիւնից ընտրուած երկու անդամներից, որոնցից մէկը ընտրւում է յատկապէս գանձապահի պաշտօնի համար։

§ 100. Տնտեսական խորհրդին են ենթարկւում ըստ տնտեսականին վանքի բոլոր հիմնարկութիւնները և մարմինները։

§ 101. Խորհուրդը կազմում է վանքի տարեկան ել և մուտքը, մատակարարում է համաձայն հաստատուած նախահաշիւների հիմնարկութիւններին և մարմիններին գումարներ. ստանում է սրանց փաստաթղթերը, հաշիւները, մատեանները։

§ 102. Խորհուրդը իւրաքանչիւր տարի հրատարակում է վանական հիմնարկութիւնների և մարմինների հաշիւները և նախահաշիւները։

§ 103. Խորհուրդը պէտք է ունենայ վանքի բոլոր կալուածների վաւերացրած կալուածագրերը և յատակագծերը։

§ 104. Խորհրդի որոշումների գործադիր մարմինն է Վանական Կառավարութիւնը։

VI ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

§ 105. Վանական կառավարութեան անմիջական հսկողութեան ենթակայ են՝ սեղանատունը, ագարակը, գինետունը, հանդերձատունը, շտեմարանը, լիճը, անտառը, այգիները, արտերը, արօտատեղիները։

§ 106. Վանական կառավարութիւնը հսկում է միաբանական բնակարանների, միւս բոլոր հիմնարկութիւնների, գերեզմանատան բարեգործութեան, վերանորոգութեան վրայ։

§ 107. Վանական կառավարութիւնը կազմուած է երեք անդամից։

VII ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՄԱՐՄԻՆ

§ 108. Վանական բոլոր հաստատութիւնների և մարմինների դրամական հաշիւները քննում է Վերստուգիչ Մարմինը։

§ 109. Վերստուգիչ մարմինը բաղկացած է երեք անդամից։

§ 110. Վերստուգիչ մարմինը իւր դիտողութիւնները, նկատողութիւնները յանձնում է Վանական Խորհուրդին։

§ 111. Վերստուգիչ մարմինը բացի կանոնադրութեամբ որոշած ստուգութիւնները կատարելուց կարող է արտակարգ վերստուգութիւններ կատարել։

§ 112. Արտակարգ վերստուգութիւններ կատարւում են, երբ որոշում է Վերստուգիչ Մարմինը, երբ խնդիր է յարուցանում վանական որևէ վարչական մարմին կամ խորհուրդ և կամ պահանջում է ներսի միաբանութեան կիսից աւելին։

Ժ.

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒԹԻՒՆ

§ 113. Վանական միաբանական կանոնադրութեան մէջ կարող է փոփոխութիւն լինել Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ, միաբանական ժողովի $^{2}/_{3}$-ի ցանկութեամբ։

§ 114. Մինչև նոր կանոնադրութեան հաստատելը գործադրւում է հինը։

ՀԱՅԿ ԱՄՍՕՐ ԱՆՈՒՆ

4020

ՀՀ Ազգային գրադարան
NL0030975

3894